ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 03-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի ,,բ,, կետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը 59 857 370.60 դրամ և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը 458 612 630.20դրամ ուղղել 2021թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերին՝ համաձայն կից հավելված 1-ի /հատված 4-ի և 5-ի/:

2. 2021թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 518 470 000.80 դրամով համաձայն կից հավելված 1-ի /հատված 4-ի և 5-ի/:

3. 2021թ. համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտները և ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 2-ի:

4. 2021թ. համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցնել 19936.0 հզար դրամով և ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 3-ի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԷԴՄՈՆԴ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավար՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**